ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անուն, ազգանուն, զբաղեցրած պաշտոնը՝

Դիանա Քարազյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի ղեկավարի տեղակալ

Գործուղման վայրը և ժամկետները

Գերմանիայի Դաշնային Հանրապետություն (ք. Բեռլին), 2025թ. մայիսի 11-ից 17-ը ներառյալ

Հրավիրող կողմը

Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանություն

Գործուղման նպատակը

Գործուղման նպատակն է եղել Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանության հրավերի հիման վրա «Դիմակայուն սահմանադրական բարեփոխում» թեմայով ճանաչողական այցին մասնակցությունը:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Ճանաչողական այցի օրակարգը ներառում էր մի շարք պաշտոնական հանդիպումներ Գերմանիայի Դաշնային Հանրապետության բարձաստիճան պաշտոնատար անձանց, ինչպես նաև հետազոտական գործունեություն իրականացնող կառույցների ներկայացուցիչների հետ, որոնց հետ հայկական պատվիրակությունը (որը ներառում էր ՀՀ պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև մասնավոր ընկերությունների ներկայացուցիչներ) քննարկումներ է ունեցել սահմանադրական բարեփոխումների հիմնախնդիրների վերաբերյալ: Այցի ընթացքում Գերմանիայի Դաշնային Հանրապետության ներկայացուցիչները կիսվել են սահմանադրական բարեփոխումների առնչությամբ գերմանական փորձով:

Մասնավորապես, պատվիրակությունը հանդիպում-քննարկումներ է ունեցել Գերմանիայի Դաշնային Հանրապետության Դաշնային Սահմանադրական

Դատարանի, Հայդելբերգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի, «Մաքս-Պլանկ» համեմատական հանրային և միջազգային իրավունքի ինստիտուտի, եվրոպական քաղաքականության ինտիտուտի, միջազգային և անվտանգային հարցերով գերմանական ինստիտուտի, Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենսդիր մարմնի՝ Բունդեսթագի, Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտաքին գործերի նախարարության, Գերմանիայի Դաշնային Հանրապետության արդարադատության նախարարության, Գերմանիայի Դաշնային Հանրապետության փաստաբանական համայնքի և միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) ներկայացուցիչների հետ:

Հանդիպումների ընթացքում քննարկվել են սահմանադրական իրավունքին, սահմանադրական բարեփոխումներին, այդ բարեփոխումների մարտահրավերներին, օրենսդիր մարմնին, դատական համակարգին, միջազգային իրավունքին առնչվող մի շարք արդի տեսական և գործնական հարցեր: Հանդիպումների ընթացքում Դ. Քարազյանի կողմից ներկայացվել է վերաբերելի մասով ՀՀ փորձը՝ հատկապես միջազգային իրավական գործընթացների և մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության մեխանիզմների առնչությամբ:

Դ. Քարազյան

21.05.2025